ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Սահակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Ղարիբյան, Ք.Մկրտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. Էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների իրենց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Մ.Սահակյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ ք.Երևան, Արգիշտիի 1
-օրը՝ 31.01.2019թ.
-ժամը՝ 11:00

2. Ընդունել ի գիտություն, որ որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ

2.1. «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը եվ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» 18 մայիսի 2017 թվականի ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

2.2 Մասնակցի կողմից որակավորման պահանջների գնահատման արդյունքում Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, այն է՝ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծաղկեպսակում և ծաղկային կոմպոզիցիայում ծաղիկների բնական լինելու պահանջի նախատեսված չլինելու հետ, չի համապատասխանում իրականությանը: Պատվիրատուի կողմից ներկայացված համապատասխան տեխնիկական բնութագրում նշված է, որ ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ, իսկ մասնակցի ներկայացված տեխնիկական բնութագրում նշվել է թարմ տեսքի: Թարմ լինում են միայն բնական

ծաղիկները: Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում «թարմ տեսք» ձևակերպում չկա: Ինչ վերաբերում է առաքմանը, ապա մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է, որ առաքումը ՀՀ տարածքում պատվիրատուի նշված հասցեով ապահովում է վաճառողը, ինչը նշանակում է, որ գնման մրցույթում հաղթող կազմակերպությունը պետք է ապահովի առաքումը: Եթե առաքման ծառայությունը դիտարկվեր որպես առանձին ծառայություն, ապա որևէ կերպ կնշվեր մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

3. Վերը նշվածի համաձայն գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 23-րդ կետով «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին առաջարկվել է ծանուցումն ուղարկելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝		Մ.Սահակյան
Անդամներ՝		Լ.Ղարիբյան
		Ք.Մկրտչյան
Համակարգող՝		Վ.Մեժունց